

ԱՊԱՊԵՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ...

Շարունակում Ա. Էջեմ

նշեալ որոշումները վերատեսուքեան ենթարկելու: Հաղորդագրութիւնը յայտնեց նաեւ, որ բժիշկայինի գծով որոշումներուն ստեղծումը չի նշանակեր կառավարութեան գումարներէն հրաժարիլ, այլ պարզապէս առկախել որոշումի գործադրութիւնը:

«Այս իմաստով հաղորդակցութեան միջոցներու նախարար ժան Լուի Բըրտաակի դիմեց Օրէնսդրական խորհուրդին եւ վստահ եղաւ, թէ այդ քայլը օրինական է», նշեց հաղորդագրութիւնը:

Հաղորդագրութեան աւարտին պարմանք յայտնուեցաւ 600 միլիոն տոլարի կողքին կառավարութեան կողմէ ստեղծուած 120 միլիոն տոլար գումարին մասին, որ տեղ գտած է «Տիար» օրաթերթի էջերուն մէջ:

Միւս կողմէ, նախկին վարչապետ Սեյիմ Հըրքանաւանը բժիշկային հեռուստային գծով կառավարութեան տուած որոշումը՝ դիտել տալով, որ եթէ կառավարութիւնը հաշուէ եւ նշեալ հեռուստային ընկերութիւններուն պարտադրէ վճարել 1999էն արձանագրուած օրինականացութիւններու հատուցումը կառավարութեան գանձարկին ապահոված կ'ըլլայ աւելի քան մէկ միլիար տոլար:

Նոյնանման քննադատութիւններ ուղղուեցան նաեւ կառավարութեան հաղորդակցութեան միջոցներու նախկին նախարար Իսամ Նասանանի կողմէ:

«ԵՐՈՒՄԱՂԵՍԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ»ՈՒՄՆ ԱՌԻԹՈՎ՝ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՓԱՌԱՏՈՆ

«Երուսղէմի Միջագային Օր»ը երէկ նշուեցաւ յատուկ տօնակատարութեամբ, որուն տեղեկատուական գրասենեակի պատասխանատու Նապիլ Ապու Տուրքում եւ «Դիմադրութեան Հաւատարմութիւն Պլոք»ի անդամ Երեսփոխան ժորժ Նաթըմ իրենց խօսքերուն մէջ նշեցին պաղեստինեան տագնապին արդար լուծում մը գտնելու անհրաժեշտութիւնը:

Քարտուղար Միրվաթ Թալաուի, անոր տեղեկատուական գրասենեակի պատասխանատու Նապիլ Ապու Տուրքում եւ «Դիմադրութեան Հաւատարմութիւն Պլոք»ի անդամ Երեսփոխան ժորժ Նաթըմ իրենց խօսքերուն մէջ նշեցին պաղեստինեան տագնապին արդար լուծում մը գտնելու անհրաժեշտութիւնը:

Կուսակցութեան ղեկավար, Երեսփոխան Ուսուխտ Ժորժաթ, Լիբանանի մէջ Իրանի դեսպանը, ինչպէս նաեւ այլ պաշտօնատարներ:

ԸՋՊԱՆԱՅԻ ՓԱՌԱՏՈՆԸ

«Երուսղէմի Միջագային Օր»ը անուիթով, Հըրպալլայի կազմակերպութեամբ, երէկ Նաթըմի մէջ տեղի ունեցաւ փառատօն մը, որուն ընթացքին խօսք առաւ Հըրպալլայի ընդհանուր քարտուղար Հասան Նասրալլա:

Փառատօնին ներկայ էին իշխանութեան երեք պետերուն ներկայացուցիչները, նախարարներ, Երեսփոխաններ, լիբանանեան եւ պաղեստինեան կուսակցութեան ներկայացուցիչներ, Ընկերվար Յառաջդիմական

Հ. Յ. Գ. ՉՈՄԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ՝ Լ. Ա. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՆԴԱՄ

Լիբանանեան Ամերիկեան համալսարանի պոյզ մասնաճիւղերուն՝ Պէյրութի եւ Ժիպէյի մէջ, երէկ տեղի ունեցան ուսանողական խորհուրդներու ընտրութիւնները:

Պէյրութի մասնաճիւղին մէջ ուսանողական խորհուրդի 10 անդամներ շահեցան Ընկերվար-Յառաջդիմական կուսակցութեան, Մուսաքալայի, պաղեստինցիներու, Հըրպալլայի, Ղովմիներու, Ամալի, Շապապ Պէրալի, Ժամաա Իսլամիէի եւ ՉՈՄԻ թեկնածուները:

Այսպիսով, Վիզէն Փեյլիւսեան անդամ դարձաւ ուսանողական խորհուրդին:

Միւս կողմէ, Ժիպէյի մասնաճիւղին մէջ նաեւ, հայկական համալսարանի կողմէ անաջադրուած հայ ուսանող մը՝ Սերժ Տէր Թորոսեան արձանագրած է յաջողութիւն:

«ԱԶԳԱԿ»Ի ՖՈՆՏԻՆ

●«ԱԶԳԱԿ»ի կայքէջին սկսելուն առիթով, Երուսղէմի Փամպուքեան 100,000 Լ. ռ.

ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐՈՒ ՄԵՌԻԹԻՒՆ՝ ՄՏՔՈՎ ԹԵՐԱՃ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ «ՉՈՒՄՐՈՆ» ԿԵԴՐՈՆ

15ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ ՈՒՏԵՍԵՂԵՆԻ ԵՒ ՁԵՈԱՅԻՆ ԱՃԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ՎԱՃԱՌԸ

Տեղի կ'ունենայ 4 եւ 5 Դեկտեմբեր 2002, կէսօրէ առաջ ժամը 10:00է սկսեալ մինչեւ կէսօրէ ետք ժամը 4:00, «Ձուարթոն» կեդրոնին մէջ:

Հասցէ.- Հայ Աւետ. Հոգեւոր Եկեղեցւոյ շրջափակ:

ՀՐԱՄԵՐ

ԼՕԽԻ «ԿԱՐՍ» ՄԱՍՆԱԾԻՂ

ԵՐԹԱԿԱՆ Ա. ԺՈՂՈՎ

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 3 Դեկտեմբեր 2002, առաւօտեան ժամը 9:30ին, «Ազատամարտ» ակումբին մէջ:

ՀԱՐՉՈՒԹԻՒՆ

ՍՕՏ ՕՐԵՆ ՍՕՏ ՕՐԵՆ

«ԱՂԲԱԼԵԱՆ - Հ.Մ.Ը.Մ.»

ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԵՆ ՆԵՐՍ

◆ AEROBICS ◆ STRETCHING ◆ TAEBOP

եւ

◆ BRIDGEԻ ԴԱՍԸՆՈՒՄՆԵՐ

Մանրամասնութիւններու համար անձամբ ներկայացաւ համալիրի անօրէնութեան, առաւօտեան ժամը 10:00էն 1:00 եւ կէսօրէ ետք ժամը 5:00էն 9:30, կամ հեռաձայնել նոյն ժամերուն 04-722902/3 թիւերուն:

ՏՆՕՐԵՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԹԵԼԵԹՈՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՈՅԹԸ...

Շարունակում Ա. Էջեմ

Ափ՝ 1,901,000 տոլար, Միացեալ Նահանգներու Արեւմտեան Ափ՝ 1,713,000 տոլար, Ֆրանսա՝ 650,000 տոլար, Գերմանիա՝ 31,000 տոլար, Հոլանտա՝ 25,000 տոլար, Արժանթին՝ 75,000 տոլար, Պրագա՝ 10,000 տոլար, Քանադա՝ 5,000 տոլար:

Յատկապէս մեծ նուիրատուութիւններ կատարած են Լուիզ Սիմոն Մանուկեան՝ մէկ միլիոն տոլար, Հըրպ Զոլմանեան՝ մէկ միլիոն տոլար, Ալպէրթ Պոյաճեան՝ 500,000 տոլար:

Հանգանակութեան իրենց մասնակցութիւնը բերած են նաեւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին՝ 300 հազար տոլար եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ 100 հազար տոլար:

Հանգանակուած գումարով պիտի կառուցուի Լեռնային Ղարաբաղի «Հիւսիս-Հարաւ» մայրուղիի երկու հատուած:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Հասարակական գործիչ եւ վաստակաւոր ղեկավար ՎԱՐԻՃ ԺԵՐԵՃԵԱՆԻ կային տիկին Վերժին Ժերժեան եւ իր ընտանեկան պարագաները, ճերժեան-Ղուկասեան ընտանիքներ, շնորհակալութիւն կը յայտնեն Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. վեհափառին, հանրապետութեան նախագահի ներկայացուցիչ նախարար Միշէլ Մուսայիին, խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի ներկայացուցիչ Երեսփոխան ժան Օղասապեանին, վարչապետ Ռաֆիք Հարիրիի ներկայացուցիչ Երեսփոխան տոքթ. Եղիկ ճերժեանին, Լիբանոնի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեանին, Լիբանոնի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեանին, Հայ Կաթողիկէ պատրիարքութեան փոխանորդ Գեր. Վարդան արքեպս. Ազարեանին, Հայ Աւետարանական համայնքայեւտ վեր. Սկրտիչ Գարակեօզեանին, հայկական եւ լիբանանեան կուսակցութիւններու ներկայացուցիչներուն, հայ մամուլի թղթակիցներուն եւ խմբագիրներուն՝ «Արարատ», «Ազդակ», «Չարթոն», «Կամէ», հոգեւոր հայրերուն եւ քահանայից դասին եւ բոլոր անոնց, որոնք անձամբ կամ մամուլով, մասնակցեցին եղան իրենց սուգին՝ յայտնելով իրենց համակրանքը, յարգանքն ու ցաւակցութիւնները իրենց սիրելեալ ամուսինին եւ հարազատին մահուան առիթով:

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ

ՎԱՐԻՃ ԺԵՐԵՃԵԱՆԻ մահուան քառասունօրին առիթով, իր այրին՝ տիկին Վերժին Ժերժեան կ'ընէ իր արտաբուխ նուիրատուութիւնները՝ «Արարատ», «Ազդակ», «Չարթոն» օրաթերթերուն, «Ճահակիր» շաբաթաթերթին, Հ. Կ. Բ. Մ. Ի Սահակեան - Լեւոն Սկրտիչեան վարժարանին, Հ. Մ. Ս. Ի եւ Հ. Մ. Ս. Ի սկստական խորհուրդին:

Նուիրատուութիւնները ստանալ ճերժեան գրասենեակէն, հեռաձայն՝ 03 242382, ճարտարապետ Սիսաք Ղուկասեանէն:

ՄԱՀԱԶԳ

Տիկին Շաքէ Պոյաճեան Տէր եւ տիկին Հրաչ Պոյաճեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Սափո Պոյաճեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Հայկազակ Լէֆէճեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Լեւոն Սահակեան եւ զաւակունք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, աներոյ, քենեկային եւ հարազատին՝

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՅԱՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 29 Նոյեմբեր 2002, առաւօտեան ժամը 4:00ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Շաբաթ, 30 Նոյեմբեր, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Նոր Մարաշի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրիշ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

●Ներկայս ընդունիլ իրեն մահազգ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

●ԵՐԵՍՓՈՒՆԱՆ ձորճ Գասարճի երէկ ղիտել տուաւ, որ բժիշկային հեռուստային առնչութեամբ տրուած որոշումները «Սեյի» եւ «Ֆրանս Թելեքոմ» ընկերութիւններուն առիթ տուին՝ մասնակցելու յառաջիկայ անուրդին կամ նուազուրդին՝ նիւթական նպաստաւոր պայմաններով, եւ պետական գանձարկէն 600 միլիոն տոլարի արժողութեամբ մուրհակներու կորուստին:

●ԱՌԵՒՏՈՒՐԻ Եւ տնտեսութեան նախարար Պասէլ Ֆելիսյան երէկ ստանձնեց 20 հազար թոն ցորեն, որ նուիրուած է Միացեալ Նահանգներու կողմէ:

●ՄԱՐՈՒՆԵՐՈՒ Նասրալլա Պուրթոս Սֆէյր պատրիարքը երէկ Պրեքթի մէջ ընդունեց պետական նախարար Փիեռ Հըրոն, որուն հետ քննարկեց քաղաքական վերջին զարգացումները:

Հըրոն յայտնեց, որ բրոյքս անուր 1994էն ի վեր կը գոյատեւէ, սակայն եթէ նոր կառավարութիւն կազմելու հարց ըլլայ, անիկա պէտք է ընդգրկէ պետական նախարարներ:

●ՇԻՒՆԵՐՈՒ Գերագոյն խորհուրդի փոխ նախագահ միւֆթի Ապտէլ Էմիր Քապալան երէկ պարակցութիւն յայտնեց «Փարիզ - 2» ի ժողովին:

●ԺԸՅԻԹԱ քարայրի տնօրէնութիւնը յայտարարեց, որ քարայրը պիտի վերաբացուի յառաջիկայ Շաբաթ օրու ընդ սկսեալ: Նշենք, որ քարայրը մէկ տարի է ի վեր փակ էր բարեգործման աշխատանքներու շնորհիւ:

●ՕՍԱՐ ՔԱՐԱՄԷ Երէկ շեշտեց, որ Լիբանան սնանկացած երկիր մը է եւ պէտք չունի քաղաքական պորտու որոշումներու: Ան քաւ. «Համբերե՛ք. տեսնենք «Փարիզ - 2» ի խստամտութիւնը պիտի իրագործուի»:

Քարամէ ղիտել տուաւ, որ լիբանանցի ժողովուրդը կքած է տուրքերու բեռան տակ:

Ս. ՅԱԿՈՒԲ ԵԿԵՂԵՅՈՒՅ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻԹԸ

ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ Հաճոյքն ունին ձեռք հրակիրելու

«ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԴԵՊԻ ԸԱՅԱՍՏԱՆ, ԱՐԵՄՏԵԱՆ ԸԱՅԱՍՏԱՆ, ԿԻԼԻԿԻԱ ԵՒ ԱՐՑԱԽ»

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՑՈՒՅԱՀԱՆԴԵՍԻՆ

Արուեստագետ ԼԵՒՈՆ ԹԱՇՃԵԱՆԻ հին եւ նոր նկարներու

Հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ՝ ԳԵՐՁ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ Առաջնորդ Լիբանոնի Հայոց Թեմի

Նախագահութեամբ՝ ԽԱՉԻԿ ԵՒ ՄԱՐԿՕ ՊԱՊԻԿԵԱՆՆԵՐՈՒ ԴՈՒՍՐԵՐՈՒՆ

Ցուցահանդէսի բացում՝ Ուրբաթ, 6 Դեկտեմբեր 2002, երեկոյեան ժամը 6:30ին, Ս. Յակոբ եկեղեցւոյ «Տիրան Պապիկեան» սրահին մէջ, Էշրեֆի:

Ցուցահանդէսի տեւողութիւն՝ 6էն 10 Դեկտեմբեր 2002, առաւօտեան ժամը 10:00էն երեկոյեան ժամը 7:00:

ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է

Հ. Յ. Գ. ԼԵՄԻ 2003Ի ՊԱՏԻ ՕՐԱՅՈՅՈՅԸ



Հ.Յ.Գ. ԼԵՍ. 30ամեակ

1973

2003

ՍԱԿ 10,000 ԼԻԲ. ՈՍԿԻ

ԳԵՐԱՍԵՆՈՑ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ԱԿԱԳԵՄԻԿՈՍ ՅԱԿՈԲ ՄԱՆԱՆԳԵԱՆ

(ՍԱՀՈՒԱՆ 50ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈԿ) - (1873-1952)

Յրանսական յեղափոխութեան անմիջապէս հետեւանքը եւ գերմանական ուսման քիզմի ազդեցութիւնը շատ մեծ եղան ճշնունակ ժողովուրդներու վրայ, ներառեալ՝ հայոց, որոնք հաղորդակից էին այս գաղափարներուն, Դորպատի (էսթոնիա), Փարիզի, Լայպցիգի, Հոլմի թէ եւրոպական այլ համալսարաններու հայ ուսանողներուն միջոցով: Հայերը, ի շնորհիւ իրենց հայկական համալսարանի մը, հետեւեցան ուսուցանող եւ եւրոպական համալսարաններու դասընթացներուն: Ժ. Պարէն սկսեալ թրքահայերէնը սկսան ուսանիլ Ֆրանսական, գերմանական, գուրգուրական եւ իտալական համալսարաններու մէջ: Իսկ ուսուցանողը կը յաճախէին Մոսկուայի, Փեթերսպուրի եւ Խարքովի համալսարանները:

Ռուսահայերու համար Դորպատի գերմանական համալսարանը կարեւոր դեր մը խաղաց հայ մտաւարական շարժման սկզբնաւորութեան: Այս համալսարանը, որ գերմանական գիտութեան յառաջադէպ եղաւ Արեւելեան Եւրոպայի ուղղութեամբ, հայկական մշակոյթի վերածնունդին մէջ խաղաց կարեւոր դեր մը, զոր գերմանացի գրագէտ եւ պատուելի դոկտ. Փաւլ Ռոզը պախ շեշտած է առանձնապէս:

Առաջին հայ ուսանողը, որ ուսանեցաւ Դորպատի մէջ, եղաւ Խաչատուր Աբովեանը՝ հայ ազգի արդի գրականութեան հիմնադիրը:

Յիսուն տարի առաջ, 1952 Փետրուար 4ին, Երեւանի մէջ կը մահանայ համալսարանի ինքնակազմի հայկական Գիտութիւններու Ակադեմիայի իսկական անդամ, Հայաստանի համալսարանի պատմագէտ փրոֆ. դոկտ. Յակոբ Համազասպի Մանանդեանը: Անոր մահով հայոց պատմագիտութիւնը ունեցաւ մեծ կորուստ մը:

Մահ էր 22 Նոյեմբեր 1873ին, Վրաստան, Ախալցխա: Միջնակարգ կրթութիւնը ստացած էր Թիֆլիսի ուսուցանող դպրոցին մէջ, ապա բարձրագոյն ուսումը շարունակեց Վրաստանի Գորիսի Գերմանական, ուր հետեւած էր փիլիսոփայութեան եւ բանասիրական ճիւղերուն՝ Լայպցիգի, Շթրասպուրի եւ Ենայի համալսարաններու մէջ, «աշակերտութիւն» նշանակող հայագէտ եւ թիւզանդագէտ Կեղեցիի:

Ենայի համալսարանի փիլիսոփայական բաժնի ւաւորելէ ետք, ան կը հրատարակէ «Ալպանիոյ պատմութեան համար յօդուածներ» Լայպցիգի մէջ, 1897ին:

Մօտ մէկ տարուան մէջ կը ճամբորդէ Լոնտոն, Փարիզ, Պերլին եւ Վիեննա քաղաքները՝ ուսումնասիրելու համար այնտեղի պետական թանկարանները, ազգային գրադարանները եւ համալսարաններու արխիւները:

1897ի վերջերս կը վերադառնայ Հայաստան եւ կը կարգուի էջմիածնի Գէորգեան ձեռնարանի ուսուցիչ: Կը դասուանէ հին յունարէն, գերմաներէն եւ յունական գրականութեան եւ փիլիսոփայութեան պատմութիւն: Էջմիածնի գտնուած ատեն կը կատարէ բանասիրական աշխատանքներ՝ օգտուելով վանքի ճոխ ձեռագրատունէն: Գ. Տէր Մկրտչեանի հետ լոյս կ'ընծայէ «Հայ հին վկաներ» աշխատութիւնը:

Տարի մը ետք, ուսուցչի շարունակելու համար Ս. Փեթերսպուրիի Կայսերական համալսարանի արեւելեան լեզուներու կաճառի քննութիւններուն կը մասնակցի փրոֆ. Ն. Մառնի մօտ եւ կը ստանայ առաջին կարգի վկայականը:

Երկրորդ ժամանակ Գէորգեան ձեռնարանի մէջ ուսուցչութիւն ընելէ ետք կը տեղափոխուի Թիֆլիս եւ դաստուար կը կարգուի ուսուցանող գիմնադիտունի մէջ (գերմաներէնի, հայերէնի եւ հայ գրականութեան):

1901ին Գերմանիոյ մէջ առաջին անգամ ըլլալով լոյս կը տեսնէր պարբերական մը՝ երկու լեզուներով, հայերէն եւ գերմաներէն: Կրնանք հաստատել, որ անկապ գերմանահայութեան անդրակի թերթը եղաւ, որովհետեւ ատէկ առաջ Գերմանիոյ մէջ հայերէն լեզուով ոչ մէկ թերթ լոյս տեսած է: Այս պարբերականը լոյս տեսած է միայն չորս տարի՝ «Հանդես Հայագիտութեան», «Zeitschrift fuer Armenischen Philologie», Մարպուրի քաղաքին մէջ:

1903ին Հ. Աճառեանի հետ միասին Յակոբ Մանանդեան կը հրատարակէ «Հայոց նոր վկաներ» գործը, սկիզբը՝ իրրեւ «Գիտական հրատարակութիւն», ապա նաեւ իրրեւ ժողովրդական հրատարակութիւն:

Մանանդեան 1909ին կը մասնակցի Դորպատի համալսարանի իրաւաբանական կաճառի քննութիւններուն, իրաւունք կը ստանայ պաշտօնավարելու իրաւական հիմնարկներուն մէջ, գրադարանի գրատարանութեամբ: Նոյն տարին կը վերադառնայ Պաքու եւ կը գրադի հանրային գործունէութեամբ կ'աշխատակցի «Գործ» ամսաթերթին: միեւնոյն ժամանակ կը գրադի փաստաբանութեամբ:

«7-6րդից մինչեւ 3րդ դարերը մեր թուարկութիւնից առաջ, հայ ժողովրդի պատմական անցեալում կազմում է մի շատ կարեւոր շրջան: Այդ ժամանակներում հետզհետեւ կազմաւորուել է հայ ցեղը եւ ստեղծուել է նախկին Ուրարտական թագաւորութեան երկրամասում պատմական Հին Հայաստանը»:

ՅԱԿՈԲ ՄԱՆԱՆԳԵԱՆ

(«Ընճական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան», Ա. հատոր, 1944)

Ռուսական Կայսերական ակադեմիան 1911ին կը հրատարակէ Յակոբ Մանանդեանի վերջին տարիներու աշխատասիրութիւնը, «Մեկնութիւն ստորագրութեանց Արիստոտելի, ընծայեալ Ելիսայի Իմաստաւերի»:

1911 - 1913ին կը դասուանէ Պաքուի Ժողովրդական համալսարանին մէջ, 1915 - 1919ին՝ Պաքուի Առեւտրական դպրոցին մէջ: Հայաստանի Առաջին Հանրապետութեան շրջանին կը վերադառնայ Երեւան եւ կը դառնայ դասախօս նորաբաց համալսարանին եւ այդ օրուին սկսեալ ամբողջութեամբ իր ուժերն ու հմտութիւնը կը նուիրէ Հայագիտական աշխատանքներու եւ յատկապէս հայոց պատմութեան: Երեսուն տարի կապուած կը մնայ Հայաստանի համալսարանին հետ:

Հայաստանի Հանրապետութեան խորհրդայնացումէն ետք Յակոբ Մանանդեան կը մնայ Երեւան, եւ երբ համայնավարները կը վերաբանան համալսարանը Երեւանի մէջ, զինք կը նշանակեն «ժողովրդական» անունով վերամշակուած համալսարանի տնօրէն, 1921ին:

Յ. Մանանդեանի շնորհիւ է, որ համալսարանին շուրջ կը համախմբուին փայլուն եւ մեծատաղանդ գիտնականներ՝ Գ. Ղափանցեան, Հ. Աճառեան, Ստ. Մալխասեան, Մանուկ Աբեղեան եւ ուրիշներ:

Բայց կարճ ժամանակ ետք համալսարանի տնօրէնութիւնը կը յանձնուի համայնավարի մը՝ Յ. Յովհաննիսեանին, իսկ Յակոբ Մանանդեան կը մնայ իրրեւ դասախօս հին շրջանի հայոց պատմութեան: Մանակաբանական գործունէութեան հետ կը գրադի նաեւ գիտական աշխատութիւններով եւ հետզհետէ լոյս կ'ընծայէ համալսարանի եւ հետագային նաեւ Գիտ. Ակադեմիայի տեղեկագիրներուն մէջ շարք մը ուսումնասիրութիւններ, որոնցմէ շատերը կը վերամշակէ հետագային եւ կը հրատարակէ առանձին հատորներով:

1922ին լոյս կը տեսնէ անոր «Հայաստանի պատմութիւնը թուրք - քաքարական արշաւանքների շրջանում» աշխատութիւնը: Գիտական մասնուի մէջ տպագրած է արժէքաւոր յօդուածներ, ինչպէս «Գիտութիւնները հին Հայաստանի շինակազմների դրութեան մասին՝ մարգարանութեան շրջանում», «Հայաստանի արքունի հարկերը մարգարանութեան շրջանում», եւ այլն:

Նոյն տարիներուն առանձին գիրքերով լոյս կ'ընծայէ «Նիւթեր հին Հայաստանի տնտեսական կեանքի պատմութեան» (երկու պրակներով, 1927 եւ 1928ին): Կը յաջողէ «Յունաբան դպրոցի եւ նրա զարգացման շրջանները» (Վիեննա, 1928ին): «Կլիոնները եւ չափերը հնագոյն հայ աղբիւրներում» (1930), «Հայաստանի առեւտրի եւ քաղաքների մասին՝ կապուած հին ժամանակների համաշխարհային մանր հետազոտութիւններ» (1932ին), «Ռոբեւագու առեղծուածի լուծումը» (1934ին): «Էրատոսթենեսի ստադիոնը եւ պարսից ասպարէզը» (1930ին), «Փետրալիզմը հին Հայաստանում» (1934ին), «Հին Հայաստանի գլխաւոր նախապահները ըստ Պետիգրեանի քարտէզի» (1936ին) «Թեոփոնես յաղագս նարտասանական կրթութեանց՝ հանդերձ յոյն բնագրաւ» (1938ին) եւ այլ աշխատութիւններ:

1944ին կը հրատարակէ «Հին Հայաստանի եւ Անգղիոյ կապի մի քանի պրոբլեմների մասին» փոքրիկ գործը: Յ. Մանանդեան այս գիրքին մէջ կը մեկնաբանէ Բենեդիկտի հայաստանեան ուղեգիրը նոր տեսութիւնը: Փրոֆ. դոկտ. Յակոբ Մանանդեանի պատմագրական հետազոտութիւններուն մէջ բացառիկ տեղ կը գրաւէ «Տիգրան Երկրորդը եւ Հոմերը» (1940, Երեւան), որուն ուսուցիչն էր Մանանդեանը: 1935ին, պատմական գիտ. դոկտ. 1938ին: ԽՍՀՄ Գիտութիւններու Ակադեմիայի ակադեմիկոս՝ 1939ին՝ ՀԽՍՀ Գիտութիւններու Ակադեմիայի ակադեմիկոս՝ 1943ին:

Յակոբ Մանանդեանի «Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան սկիզբէն մինչեւ Արշակունիների հաստատումը Հայաստանի մէջ» գործի Ա. հատորը լոյս տեսած է 1944ին, Երեւանի մէջ, իսկ Գ. հատորը լոյս տեսած է անոր մահէն ետք, 1952ին, Երեւանի մէջ:

1948ին Դեկտեմբեր ամսուան մէջ, խիստ համեստ հանդէսով մը, այն օրուան հայ համայնավարները կը նշեն պատմագէտ Յակոբ Մանանդեանի ծննդեան 75ամեակը: Ատիկա վերջին մեծարանքն է եղած, զոր անոնք կ'ընծայէին բազմապատակ գիտնականին:

Յ. Մանանդեան կը մահանայ 1952 Փետրուար 4ին. թաղուած է Պետական համալսարանի հին շէնքի բակին մէջ:

Ըստ պատմաբան Գառնիկ Գիւլաբեանի, «Յակոբ Մանանդեանը սկիզբը երեւաց որպէս բանասէր, որպէս հին բնագիրի, նրանց թարգմանութիւնների հրատարակող: Այս շրջանում նրան հետաքրքրում էին հայոց մշակոյթի իտալական գաղափարական հիմքերը, յունական մտաւարական հոսանքների արձագանգումը հայ հին գրականութեան մէջ: Այսպիսի հետաքրքրութիւն նրա մէջ գարգացրել էր գերման բանասիրութիւնը եւ այսպիսի աշխատանքի համար նա լաւ գիտէր յունարէն լեզուն: Իսկ սրանք միայն լեզուներ չէին նրա համար եւ հիմնովին ծանօթ էր նաեւ լատին լեզուին: Գերմանիոյ մէջ Յ. Մանանդեանը իւրաքայլ է գերման պատմագիտութեան ոգին՝ լինել փաստացի, միշտ ղեկավարուելով մէկ սկզբունքով, որ պատմութիւնը փաստերի գիտութիւն է, գործ ունի եզակի եւ չկրկնուող փաստերի հետ:

«Հայոց պատմութեան հետազոտութիւնը Յ. Մանանդեան կատարում է միայն եկզբնաղբիւրների հիման վրայ, այսինքն՝ հայ յատին եւ յոյն աղբիւրները ի նկատի ունենալով: Աստիճանի նա չգիտէ եւ ցանկութիւն է յայտնում, որ մէկ ասորագէտ օգտագործէ այդ լեզուով եղած աղբիւրները հայոց պատմութեան լուսարանութեան համար: Իսկ այդ աւելի բան անհրաժեշտ է, որովհետեւ հայ մշակոյթի հոյակապ երկար ժամանակ պայմանաւորուած է եղել ասորական ազդեցութեամբ թէ՛ քրիստոնէութիւնից առաջ եւ թէ՛ յետոյ: Նոր պատմագիտութիւնը նրան մտաշելի է ուսուցիչ, գերմաներէն, անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով: Իսկ յոյն եւ լատին աղբիւրները ամէնէն կարեւորներն են, որոնք նա օգտագործել է սպառիչ ձեւով: Չկայ հին գրականութեան մէջ մէկ էջ, մէկ նախադասութիւն, հայերին վերաբերող եւ Հայաստանում կատարուած քաղաքական դէպքերի, հաստատութիւնների, դէմքերի մասին, որ նա ի նկատի ունեցած չլինի»:

«Յ. Մանանդեան մարքսիստ չգարձաւ, բայց մարքսիզմը նրա պատմագիտական մտքին տուեց նոր թեքում: Նոր պայմաններում նա իր բովանդակ կարողութիւնները նուիրեց Հին եւ Միջնադարեան Հայաստանի ընկերային կեանքի հետազոտման, տնտեսութեան, դասերի, նրանց յարաբերութեան եւ անցած փուլերի լուսարանութեան: Նա չմոռցաւ այս բոլորը կապելու քաղաքական հոյակապ մշակութային հոսանքների հետ»:

Յակոբ Մանանդեանի «Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան» Գ. հատորի մասին ժամանակին բաւական գրախօսականներ գրուեցան: Գէորգեան ձեռնարանի եւ Փրակայի համալսարանի շրջանաւարտ, պատմաբան, զրոյց եւ ուսուցիչ՝ Գ. Գիւլաբեան իր ուսուցիչին գիրքին մասին կը գրէ: «Մանանդեանի ուսումնասիրութեան նիւթը բուն Հայաստանի պատմութիւնն է, հեղինակը ի նկատի չունի նոյն ժամանակներում հայ իշխանների ճիգերով ստեղծուած Կլիւիեան կամ «Ռուբինեան թագաւորութեան պատմութիւնը»: Ըստ հեղինակին, «Հայութեան այս երկու հատուածների պատմական անցքերը, թէեւ ունին շփման ընդհանուր կետեր, սակայն ունեցել են տարբեր ընթացք եւ բովանդակութիւն»:

Հայաստանի Առաջին Հանրապետութեան նախկին վարչապետ Սիմոն Վրացեան, իրրեւ Գէորգեան ձեռնարանի ուսանող, իր ուսուցիչին գրադի:

ՀԱՄՕ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Գերմանիա
Շարք՝ էջ 10

ԼՕՍ. ՕՐԱՅՈՅՅԻ ՄԸ ՃԱՄԲՈԿ ՀԱՅ ՄԵԱԿՈՅՅԻ ՏԱՐԱԾՈՒՄ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՕՐԱՅՈՅՅՆԵՐԸ

Ամէն տարի այս օրերուն, այսինքն՝ տարուան վերջին ամիսներուն, հրապարակի վրայ կը տեսնենք բազմաթիւ օրացոյցներ, յուշատետրեր: Պատի օրացոյց, սեղանի կամ գրպանի օրացոյց, ամէն չափի ու որակի օրացոյցներ, որոնք կ'արտայայտեն տուեալ կազմակերպութեան կամ միութեան գործունէութեան պատկերին առնթմբ՝ մշակութային ճաշակ մը, որ կը տարբերի մէկը միւսէն:

Օրացոյցներու «պար» մը կը կատարուի հրապարակներու վրայ՝ աւելեւելու համար Նոր Տարին: Բազմաթիւ հաստատութիւններ, հայրենակցական միութիւններէն մինչեւ բարեսիրական եւ մշակութային կազմակերպութիւններ, եկեղեցական ու կրթական հաստատութիւններ, բոլորն ալ կը ներկայացնեն իրենց գործունէութեան չափն ու կշիռը, հեռանկարները: Նոյն ատեն եկամտուտ աղբիւր մը կը նկատուի օրացոյցը, թէեւ կը տեսնենք բազմաթիւ կազմակերպութիւններ, որոնք իրրեւ Նոր Տարուան նուէր կը բաշխեն զանոնք:

Անկախ հաշուետուական կամ ծանօթացման իրենց բնոյթէն, օրացոյցները մշակութային երես մըն ալ ունին, գեղարուեստական բնոյթ, որով կը յայտնաբերուի տուեալ կազմակերպութեան հետաքրքրութիւնը, պատկերացումը կամ նախանշանները իրենց հայկական մշակոյթին նկատմամբ:

Հարկ է նկատի ունենալ նաեւ պարագայ մը՝ ամէն տարի միեւնոյն հաստատութիւնը կարելիութիւնը կամ նախադրեալները չի կրնար ունենալ միեւնոյն մակարդակով օրացոյց հրատարակելու: Տարի մը կը գերազանցուի մակարդակը, ուրիշ տարի մը կը նահանջէ ճաշակը, ու ասիկա բնական հոլովոյթ կը նկատուի:

Ընդհանրական այս ընդթագրումէն ետք, շեշտը պիտի դնենք Լիբանանահայ Օգնութեան Խաչի վերջին երեք տարիներուն (մասնաւորաբար) լոյս ընծայած օրացոյցներուն վրայ, նկատի առած անոնց բացառիկ որակը, մշակութային եւ գեղարուեստական տարողութիւնը: Յիշողութիւնները թարմացնելու համար թուեց հետեւեալները: 2001 թուականի օրացոյցը նուիրուած էր Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակին նուիրուած: Տպուած էին Հայաստանի հռչակաւոր վանքերուն եւ տաճարներուն նկարները, գունաւոր, գեղատիպ, իւրաքանչիւր եկեղեցական կառուցիչին մասին պատմական տեղեկութիւններով:

2002 թուականի օրացոյցը նուիրուած էր հայ կնոջ: Հայ արուեստագէտ գեղանկարիչներու հայ կինը արժեւորող գեղանկարներ տպուած էին իւրաքանչիւր ամսուան էջին վրայ, «Հայ կինը հայ գեղանկարիչներու աչքերով» թեմայով:

Այսօր մեր ձեռքին ունիք 2003 թուականի օրացոյցը, «Պատգամ խաղաղութեան» թեմայով: Առաջին էջին վրայ տպուած է Փոյ Կիրակոսեանի քննույն, անմեղութեան գոյն ունեցող պարման աղջկան մը նկարը՝ աղանի մը խորհրդանշող պատրանքով ներկայացուած:

Իւրաքանչիւր ամսուան էջին վրայ կը տեսնենք հայ գեղանկարիչի մը ստեղծագործութիւնը, նուիրուած՝ մարդկային զգացումներուն, խաղաղութեան խորհուրդին, բնութեան ներգործութեան: Անոնք գործերն են Յովհաննէս Ալվազովսկիի՝ «Նոյնեան Տպակը», Երուանդ Բոչարի՝ «Ղնտանիք», Մինաս Աւետիսեանի՝ «Ձօն մայրութեան», Շանթի՝ «Հանդիպում», Մարտիրոս Սարեանի՝ «Վարդեր», Գառգուի (Գառնիկ Չուլուսեան) «Արօրը», Սեդրակ Առաքելեանի՝ «Երկնակայաներ», Վարդան Մախոսեանի՝ «Մովսէս վրայ», Պետրոս Ասլանեանի՝ «Հայաստանի մանուկները», Փանոս Թերլեմեզեանի՝ «Վանայ ծովը եւ Սիփան սարը», Վաղարշակ Էլիբեկեանի՝ «Հարսանիք» եւ Փոյ Կիրակոսեանի՝ «Խաղաղութիւն»:

Իւրաքանչիւր գեղանկարը խորհրդանշող քերթուած մը, բանասիրութեան մը քանի մը տողերը կը կարդանք հաճոյքով: Գէորգ էմին, Աւետիք Իսահակեան, Յովհաննէս Շիրազ, Մ. Իշխան, Համօ Սահեան, Ա. Յունանեան:

Ներկայացուած է նոյնպէս արուեստագէտներուն կենսագրութիւնը:

Հայ ընտանիքի մը բնակարանին մէկ պատէն նման օրացոյցի մը առկայութիւնը միջոցառում կը ստեղծէ ներշնչող ուժ ունի, եւ նոյն ատեն հատորի մը արժէքը, հատոր, զոր կը կարդանք աչքերով, ամէն օր: Կ'արժէ փնտռել օրինակ մը՝ հաղորդուելու համար հայկական մշակոյթով:

ՀԱՆՆԱԳՈՒՄՍ

ԱՉՔԸ ԼՈՅՍ ՈՐՄՈՐԳՆԵՐՈՒՆ
ARMURERIE BARKEV
(SAM SPORT)
SILMA (ITALY)
Beretta - Benelli - Winchester
Յարգոյ յանախորդներուն կը ներկայանան
փամփոռներուն ու պիստոլետներուն ճոխ
հաւաքածոն՝ մապիւլի գիներով
Ունիք նաեւ արտօնագիրներու եւ նորոգութեան յատուկ բաժն
Կացուց.՝ Պուրճ Լամուտ, «Արմենիա» պողոտա
Ըտ. 01-261700, 03-868060

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՆԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻԶ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



ԹՈՂ ՄԵՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՆ ՈՒ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ ԽՕՍԻՆ...

ՀԱՅԱՏՐՈՓ «ՁԱՐԿԵՐԱԿՆԵՐՈՎ»

«Անցեալին «Ազգակ»ը հօրս օրաթերթն էր, յետոյ՝ ես սկսայ գայն կարդալ: Հիմա իմ գաւակներս եւս «Ազգակ» պիտի կարենան կարդալ», կը գրէր քանատահայ ընթերցող մը «Ազգակ»ի կայքէջին համար իր ուղղած շնորհաւորագիրին մէջ: Ահա այս գաղափարին մէջ կը կայանայ համացանցի միջոցով աշխարհի բոլոր կողմերը հասանելի ըլլալու «Ազգակ»ի յանձնառութեան մեկնակետը: Եւ մինչ արդէն երկու շաբաթ է վեր Սփիւռքի սրտին՝ Լիբանանի տրոփը ելեկտրոնային «գարկերակներով» եւ «Ազգակ»ի միջոցով կը հասնի համայն հայութեան, դժուար է պահ մը չխորհրդածել, չյուզուիլ եւ չվերաբարձնալ սփիւռքահայու «առեղծուածային» գոյամարտով:

Կ'ըսեն, որ համացանցը գլխաւոր գեղքն է համաշխարհայնացումի՝ շատագուցներուն, որոնք աշխարհի մշակոյթները կ'ուզեն փոխարինել «Մաքսոնալտ»ով եւ «Բոքս Բոլա»ով: Ճշմարտութեան հետոյ չէ այս խօսքը: Սակայն այդպէս եղած է դարեր շարունակ: Հօրը միշտ ալ օգտագործած է մարդկային հանճարին ստեղծած կարելիութիւնները՝ այս կամ այն ձևով աշխարհակալ դառնալու: Սակայն այդ կարելիութիւնները երբեք չեն մնացած հօգործի մեծաշնորհը, այլ՝ յարատեւողին. ուրեմն՝ նաեւ հայուն: Ահա քէ ինչն է համացանցը կարելի «գեղք» մըն է հայապահպանումի, Հայ Դատի հետապնդման, եւ, այո՛, «Մաքսոնալտ»ի փոխարէն մեր «տոմիկի ճաշերու» տարածումին: Ահա քէ ինչն է նաեւ համացանցի միլիոնաւոր կայքերուն վրայ աւելցաւ նաեւ այլ կայք մը՝ www.aztagdaily.com:

5 Մարտ 1927ին լոյս աշխարհ եկած «Ազգակ»ի առաջնութիւնը միջազգային, շրջանային քէ տեղական մամուլի հրատարակութիւններուն հետ մրցիլ չէ եղած բնու: Դատի եւ իրաւունքի համար պայքար մղողին համար աւելորդ պերճանք է այս կամ այն թերթին հետ մրցիլը: Եւ բարեբախտաբար մենք այդ «լիբքս»ը չենք հետապնդած: Սակայն «Ազգակ»ի յանձնառութիւնն է յարատեւումը, որ կը շահի գրաւը: Ու 18 Նոյեմբեր 2002ին, երբ «Ազգակ»ը դրուեցաւ նաեւ համացանցը օգտագործողին տրամադրութեան տակ, «Ազգակ»ի ընթերցողը թող իր գրաւը վերստին դնէ յարատեւելու եւ յառաջդիմելու յանձնառութեան եւ ոչ՝ արհեստագիտական ամէնէն արդիական միջոցներուն վրայ:

«Ազգակ»ի կայքը պիտի չմրցի «ՍԻ. Էն. Էն.»ի եւ «ՊԻ. ՊԻ. ՍԻ.»ի հետ: Սակայն ինչպէս «Ուաթըրթ Բադի տպարան»... մէկիկ - մէկիկ շարունակ էջերը», այդպէս ալ համացանցի վրայ տեղադրուած «գունաւոր եւ գեղատիպ» կայքը պիտի շարունակէ պայքարը բոլոր ճակատներուն վրայ, ի խնդիր լիբանանահայութեան, սփիւռքահայութեան, հայութեան բարգաւաճումին:

ԽԱԶԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ

galerie PIERROT
Specialiste de Meubles D'enfants de 0 à 20 ans

Pour ses enfants on rêve toujours de ce qu'on n'a pas eu

PIERROT réalisera tous vos rêves.

Autostrade Jal-el-Dib - Tel : 04 / 713233 - 03 / 701607

ԾԱՆՈՒՑՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԿՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցիլ գիրով (հաստատութեանց պարագային)՝ ախարատար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած՝ ներկայացնել «Ազգակ»ի ծանուցումներու գրասենեակը:

ԱՆԴՕ ՊՈՑԱՃԵԱՆ
ԹՈՐՈՆԹՕ, Քանաաս

«Ազգակ»ի համացանցը հանրութեան տրամադրութեան տակ դրուած օրն իսկ եւ մինչեւ այսօր «Ազգակ» ստացաւ շնորհաւորական բազմաթիւ եւ՝ նամակներ, հեռաձայններ:

Ստորեւ խօսքը կու տանք «Ազգակ»ի ընթերցողին, որ իր «նոսրալժի»ն, սերը եւ յուզումը յանձնած է համակարգիչի ստեղծաշարին, ապա՝ մեր ելեկտրոնային նամակատուփին:

Սիրելի՛ «Ազգակ»,

Կը շնորհաւորեմ՝ ձեր կայքէջին ծնունդը՝ իրրեւ նորագոյն փաստը արհեստագիտութեան հետ քայլ պահելու դաշնակցական մամուլի նախանձախնդրութեան:

Կը յուսամ եւ կը մաղթեմ, որ շուտով «Ապարէզ» եւ մեր ընտանիքին մնացեալ թերթերը եւս հետեւին ձեր օրինակին (թէեւ մեր պարագային անգլերէն կայքէջը շատոց ունեւորէ):

Կրկին անգամ լաւագոյն մաղթանքներս «Ազգակ»ի մեծ ընտանիքի իւրաքանչիւր անդամին, ինչպէս նաեւ ընթերցողներուն՝ Լիբանան եւ Սուրիա:

ՎԱԶԷ ԲՐՈՒՏԵԱՆ
«Ապարէզ»ի խմբագիր

«Ազգակ»ի սիրելի ընկերներ,
Այս առտու մեծ հրճուանքով եւ հպարտութեամբ կարողացանք բանալ «Ազգակ»ի կայքէջը:

Մոնթեվիտոյի «Կոմիտաս» ռատիոկայանի եւ անոր բազմահազար ունկնդիրներուն անունով, սրտագին շնորհակարարութիւններ այս

Սիրելի՛ հայրենակիցներ,
Կը շնորհաւորեմ ձեզ՝ ձեր նոր կայքէջին համար. շատ ու շատ լաւ կայք մըն է. այնքան հանելի է հայերէն լեզուով գրուածները կարող համացանցին վրայ, հայրենու եւ Հայաստանի մասին լուրեր տանել:

«Ազգակ» շատ յարգուած թերթ է եւ շատ

Սիրելի՛ «Ազգակ»ի ընտանիքին,
Հպարտութեամբ, բայց մա՛նաւոր յուզումով այսօր համացանցի վրայ կարդացի «Ազգակ»ի կայքէջի տարբեր բաժինները: Անմիջապէս յիշեցի տարիներ առաջ Ուաթըրթ Բադի տպարանի կապարի հոտը եւ մէկիկ - մէկիկ շարունակ էջերը, իսկ այսօր համացանցի վրայ կը տեսնեմ գունաւոր ու գեղատիպ մեր սիրելի թերթին էջերը: Թերեւս այս պատճառով ալ շատ յուզուած եմ եւ աւելի բան չեմ կրնար գրել, բացի մաղթելէ, որ նոյն թափով, նոյն եռանդով շարունակուի աշխատանքը:

ԷՎԱ ՏԵՐՎԻՇԵԱՆ - ՊԵՐՊԵՐԵԱՆ
Աթէնք, 19 Նոյեմբեր 2002

Նուաճումին համար:
Հ. Յ. Դ. Ի գանգուածային լրատուական մեծ ընտանիքի ոլորտին մէջ «Ազգակ»ի ձեռք բերած այս յաջողութիւնը կը նկատենք մեր ալ յաղթանակը:

Յառա՛ջ, դէպի նորանոր նուաճումներ:

ուրախ եւ հպարտ եմ ձեզմով:
ԱՍՍԱՏՈՐ
ՓԻԼԻՊՈՍԵԱՆ
Էտինպարա, Սկովտիա

«Կոմիտաս»
ռատիոկայանի կողմէ
ԱՐՕ ՀԻՔԻՄԵԱՆ


Մոնթեվիտոյի,
19 Նոյեմբեր 2002

Կու գամ շնորհաւորելու ձեզ եւ յաջողութիւն կը մաղթեմ «Ազգակ» օրաթերթի անձնակազմին: Շատ ուրախ եմ, որ այսօրու ընկէ սկսեալ պիտի կարենանք ընթերցել նաեւ «Ազգակ» օրաթերթը:

ՊՕՂՈՍ ՍԷՖԵՐԵԱՆ

Կը շնորհաւորեմ «Ազգակ»ի նոր կայքէջը եւ յաջողութիւն կը մաղթեմ ձեր անձնակազմին:

ԱՆԴՕ ՊՈՑԱՃԵԱՆ
ԹՈՐՈՆԹՕ, Քանաաս



ձեռք բերուածին համարժամանակի պահանջներուն հետ քայլ պահելով՝ մեր հաստատութեան շրջանակը: Ամէն լրագրողի, մանաւանդ քաղաքական լրագրի մը աշխատակիցներուն համար նման քայլերու ձեռնարկելը պարտաւորութիւն իսկ է, եւ դուք այդ պարտաւորութիւնը մտած եմ, որ պատուով պիտի կատարէք:

ԱՐՕ ՊՈՂԻԿԵԱՆ

Կայքէջը այցելեցի ու կրկին այցելեցի, եւ փառաւորուած զգացի «Ազգակ»ին (այսինքն մեր) հաշուոյն:

ՅԱՐՈՒԹԻՒՆ

Շատ ուրախ եմ, որ վերջապէս կրնանք «Ազգակ»ը կարդալ Լիբանանէն դուրս:

Անհամբեր կը սպասէի այս օրուն: Ըլլալով Լիբանանէն՝ միշտ կը փնտռէի «Ազգակ» թերթին պարունակութիւնը:

ՍԵԻԱԿ (Մոնրէալ)

Սիրելի «Ազգակ», Անահաման ուրախութեամբ եւ հպարտութեամբ այսօր առիթ ունեցանք համացանցի վրայ բացել «Ազգակ»ի կայքէջը: Շնորհաւորում ենք ձեզ եւ բոլորս՝ Դաշնակցական մամուլի մեծ ընտանիքը, այս հանելի օրուն առիթով:

Վստահաբար, «Ազգակ»ի կայքէջը գալու է հարստացնելու մեր մամուլի միջոցների համացանցային այն տարբերակների շարքը, որոնք օրէ օր աւելանում են:

Ձեզ յաջողութիւն, նորանոր ձեռքբերումներ, եւ կայքէջում մշտապէս մեր ժողովրդի համար յաղթական եւ ուրախ լուրերի տեղադրման բազում առիթներ:

«ԵՐԿԻՐ»

Վերջապէս կը գգանք գոհունակութիւնը «Ազգակ»ի կայքէջը այցելելու եւ մեր մայրենի լեզուով լուրեր կարդալու: Անցեալին «Ազգակ»ը հօրս օրաթերթն էր եւ յետոյ՝ ես սկսայ գայն կարդալ: Հիմա իմ գաւակներս եւս «Ազգակ» պիտի կարենան կարդալ:

ՎԻԿԵՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ
Մոնրէալ, Քանաաս

այս պատուաբեր նախաձեռնութեան համար:

ՎԻԿԵՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ
Մոնրէալ, Քանաաս


Սիրելի բարեկամներ,
Կը շնորհաւորեմ այս կարգադրութեան համար, որովհետեւ ձեր միջոցով Լիբանան ծնած ամերիկահայերուն պիտի տրուի առիթը՝ իրանանահայ զաղուծի կեանքին եւ անցուցարձեւուն մօտէն հետեւելու:

ԱՐԱՍ ՊԱԼԵԱՆ
(Հրէնթիէ, Պէյրուս)
Քալիֆորնիա - Ա.Մ.Ն.

Շնորհաւորական եւ համակերպ ուղարկեցի նաեւ Հրայր Զոյաբեան, Դանիէլ Պոյանեան,

Գեներալ նաեւ խաչբառի բաժինը:

Սիրելիներ, Ձեր այս օրինակելի նախաձեռնութիւնը շատ ուրախացուց զիս:




Շնորհաւորութիւններ. Մեծ գոհունակութեամբ լսեցի ձեր կայքին մասին. ձեզի կը մաղթեմ յաջողութիւն եւ երկար շունչ:

ՍԱՐԳԻՍ ՄԱՀՍԵՐԷՃԵԱՆ

Վստահ եմ, որ ինձի նման շատերս այս կայքէջին միջոցով առիթ պիտի ունենան հետեւելու Լիբանանի մեր ազգային կեանքին՝ մեծ հաւոյրով:

Սրտանց յաջողութիւն կը մաղթեմ ձեզի՝ ձեր Ալեքս Թաշեան, Ռոբերտ Պապիկեան (Քանաաս), Վարդան Գարրիէլեան (Ֆրանսա), Բաֆֆի Գալանեան, Ռիքա Տեմիրեան եւ Յարութեան (Միացեալ Նահանգներ):



Մանկապատանեկան

ԱՇՈՒՆ Է

Կը կարծեիք, թէ աշունը տխուր եւ միօրինակ եղանակ մըն է... Ընդհակառակը, այդ շրջանին շատ կարելի է բաներ կը պատահին բնութեան մէջ:

ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Երկրագունդը կը դառնայ արեւուն շուրջը: Սակայն, որովհետեւ ան հակած է, արեւուն ճառագայթները գայն չեն լուսաւորեր նոյն անկիւնակէտէն ամբողջ տարւան ընթացքին:

Աշնան տեղեկները իրենց կանաչ գոյն տուող բոլորովին նուազ կը շինեն: Միւս գոյները, որոնք մինչեւ հիմա ծածկուած էին, կարմիր, դեղին, սրճագոյն, կը յայտնուին...

Անասունները կը կազմակերպուին: Յուրտին անոնք իրենց մուշտակը կը թանձրացնեն, շատ կ'ուտեն պաշտպանող ճարպի հաստ խաւ մը ունենալու համար եւ անօթութեան դէմ պայքարելու համար կը հաւաքեն պահեստներ:

Սակայն գետին թափած տերեւներն ալ ունին իրենց օգտակարութիւնը: Անոնք կը կազմեն գորգ մը, որ արմատները կը պաշտպանէ ցուրտէն եւ մնայուն խոնաւութիւն մը կը պահէ:

Գիտէի՞ր, թէ իրենց երկար քունին ընթացքին անասուններու ներքին ջերմաստիճանը կրնայ իջնել մինչեւ 30 աստիճանի: Անոնք սիրտը կը դանդաղի եւ կրնայ մինչեւ ժամական 4 տրոփումի իջնել: Արեւունը աւելի դանդաղօրէն կը շրջի եւ աւելի բարակ կը դառնայ չթանձրանալու համար: Շնչառութիւնն ալ կը դանդաղի (օրինակ՝ ոզնին կրնայ 2 ժամ ապրիլ առանց շնչելու), եւ մարմինը իր ճարպի պահեստները կը գործածէ ու կը նիհարնայ:

Գիտէի՞ր, թէ իրենց անձրեւը բոյսերուն կը բերէ ազոթ, ֆոսֆոր, փոքր սիւնիւմ, շաքար... որոնք կը սնուցանեն հազն ու բուսականութիւնը: Մինչ ցուրտը կը կեցնէ անոնց աճը, եւ այս ձեւով բոյսերը հանգիստի շրջան մը կ'ապրին: Հատիկներն ալ պէտք ունին ցուրտին՝ դարնան ծիլ կարենալու համար:

ԾԱՌԵՐԸ ԵՒ ՏԵՐԵՒՆԵՐԸ


Յուրտը, անձրեւը եւ լոյսի պակասը մեր արմատները թուլանում կը փոխեն, ախրութիւն մը կը յառաջացնեն: Մինչ ծառերուն նախընտրած եղանակը աշունն է: Անոնք կը պատրաստուին դանդաղօրէն ապրելու: Սակայն անոնք չեն մեռնիր: Աւելի կը հաւաքուին արմատներուն մէջ՝ ցուրտէն պահպանուած: Տերեւները նուազ լոյս կը ստա-

Յուրտն ալ կը հասնի:

ՉՄԵՌԸ ԿԸ ՄՕՏԵՆԱՅ

Յուրտն ալ կը հասնի:


ԻՆՉՈ՞Ւ ԾԱՌԵՐ ԶԿԱՆ ԲԱՐՉՐ ԼԵՌՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ



Գրեթէ բոլոր լեռներուն վրայ, 2,200 մեթրէն վեր ծառեր չեն գտներ:

- 1) Որքան մեծ բարձրանանք, այնքան օդը կը պաղի: Յաճախ երբ ջերմաստիճանը տասնէն ցած է, ծառերը չեն կրնար ապրիլ:
- 2) Ջուրը հազուադէպ է լեռներուն բարձունքներուն վրայ: աղբիւրները քիչ են եւ ջուրը յաճախ սառած է: Իսկ աճելու համար ծառ մը շատ ջուրի պէտք ունի:
- 3) Վերջապէս, երբ գառնիկները շատ գորւաւր է, հողը կը սառնի դէպի վար եւ բաւական հող չի մնար, որ պէտքի ծառը կարենայ աճիլ:


Ժ Ա Մ Ա Ն Յ




Կետերը իրարու միացուր 1էն 25՝ գտնելու համար պահուած պատկերը:




Կրնա՞ս գտնել իրարու նմանող երկու թուրակները:



Քանի՞ հատ սիրտ կայ պատկերին մէջ:



Կրնա՞ս օգնել զինուորին՝ իր պալատը հասնելու համար:



Քանի՞ եռանկյուն կը տեսնես այս պատկերին մէջ:

10	2	5	6	1	9	7	8
3							
4							

Կրնա՞ս ամբողջացնել տախտակը. իւրաքանչիւր ուղղահայեաց շարքի գումարը հաւասար պէտք է ըլլայ 17ի (օրինակ, 10 + 3 + 4):


Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ԳՈՒԿԱՍԵԱՆ




ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ՀԱԶԱՆՔ



Մենք կը հազանք նաեւ այն ատեն, երբ կողորդի կամ թոքերու հիւսնադուրսին մը ունինք: Երբ մանրէները կողորդին վրայ կը յարձակին, ան կ'աչուն հեղուկ մը կ'արտադրէ: Մանրէները այս հեղուկին թակարդին մէջ կը բռնուին: Հազարով մենք կ'արտաքսենք եւ հեղուկը, եւ մանրէները:



Մենք կը հազանք, երբ բան մը մեր կողորդը կամ թոքերը կը գրգռէ. օրինակի համար՝ փոշի մը կամ սխալ ձեւով կուլ տրուած ուտելիք մը: Հազը յանկարծակիօրէն օդը բերնէն դուրս կը հանէ շատ մեծ արագութեամբ (ժամական աւելի քան 100 քմ.), եւ կ'արտաքսէ շնչառութիւնը խափանող մասնիկը:



ԱՆՍԽԱԼ ԳՐԵՆՔ

●Մրցանքը տեղի կ'ունենայ Կիրակի, 15 դեկտեմբերին, «3ակոբ Տեր Ա Ե Լ Ր Ո Ն Ե Ն» թատերասրահին մէջ, հետեւեալ ժամանակացոյցով.

- ժամը 9:00էն 10:00, 4րդ դասարան
- ժամը 10:00էն 11:00, 5րդ դասարան
- ժամը 11:00էն 12:00, 6րդ դասարան

●Մրցանքին մասնակցողները պէտք է թատերասրահ գտնուին ժամը 8:45ին (4րդ դասարան), 9:45ին (5րդ դասարան) եւ 10:45ին (6րդ դասարան):

●Մասնակցողները պէտք է իրենց հետ ոչինչ ունենան: Գրեմական պիտոյքները իրենց պիտի տրամադրուին սրահին մուտքին:

●Մրցանքին օրը, թատերասրահի մուտքին պիտի ստացուին «Պատիկ - Ապտիկ» հասած բոլոր գծագրութիւնները:

●«Անսխալ գրեմք» արդիւնքները պիտի յայտարարուին «Պատիկ - Ապտիկ» Ուրբաթ, 20 դեկտեմբերի թիւով:

Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռահայնել «Ապտիկ» 01-260115 թիւին:

ԱՅԼԱԶԱՆ

●Աւստրալիոյ մէջ իւրաքանչիւր մը ընթացքին հաւաքուած են ոչխար հաշուող աշխարհի ամէնէն մեծ վարպետները: Քանի մը հարիւր ոչխարներ արձակուած էին անոնց առջեւ: Յաղթողը պիտի ըլլար ան, որ պիտի կարենար ոչխարներուն իսկական թիւին ամէնէն մօտ թիւը ըսել...

●Գիտնական մը խոզովակի մը խորքը դրած է ազուակի մը կերը՝ անոր խելացիութիւնը փորձելու համար: Թուշունը մետաղէ թելը ծռած է եւ գայն դործածած է իր կերին տիրանալու համար:

●Ամերիկացի ատամնարուժ մը ընդունած է խնամել 180 քիլո կշռող վագր մը՝ Պենկոն: Գազանը իր ակունները կտորած էր փորձելով իր վանդակին ճաղերը կտրել փախչելու համար: Անասնարուժ մը նախ ասելով կ'արձակուէր:



●14 Սեպտեմբերին ամերիկացի թիմ Մոնթեկոմըրի 100 մեթրը վագրած է 9,78 երկվայրկեանէն, Փարիզի մէջ տեղի ունեցած մրցումի մը ընթացքին: Իսկ դուրս որքա՞ն ժամանակէն կրնաս վագրել 100 մեթրը:

●Գիտէի՞ր, թէ 80 տարիներ առաջ, 4 Նոյեմբեր 1922ին, անգլիացի Հաուրտ Քարթըրը կը գտնէր Թուլթանիստոն փարալունին գերեզմանը եւ անոր առասպելական գանձերը: Ան եզրիպտոսի մէջ գտնուած ամէնէն արտակարգ եւ սքանչելի գերեզմանն է:

«ԱԶԳԱԿ»-Ի
ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ԿՈՒՉՈՒԻ

●Քարտուղարուի մը՝ 3 տարուան փորձառութեամբ, անգլերէն լեզու եւ համակարգիչ գործածելու գիտնալը պայման է: Դեռ. 01-378801-5 եւ 03-816189:


ԿՈՒՉՈՒԻՆ

●Ոսկերչական գործատեղի մը կարիքը ունի Փորձառու ոսկերիչի (սւտերը) մը. Թափօնու մոմ հանող օրիորդի մը. Ուսուցիչի վրայ աշխատող օրիորդի մը: Դիմել՝ Սէտ Էլ Պաուշի: Դեռ. 01-889991:

ԿՈՒՉՈՒԻՆ

●Ամերիկեան Էր ընտրութիւնը ընկերութիւն մը (Արեւմտեան Պէրու) կարիքը ունի փորձառու թեք-միսիներու, անցընող եւ նորոգող վարպետներու. BT եւ TS ունենալը նախընտրելի է: Դեռ. 01-378801-5 եւ 03-816189:

Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



ՆԱԽԱՐԱՐ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30ՎՆԱՆԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԺԱՆ ՀԱՄԱՐԸ

Երիտասարդության և մարմնակրթության նախարար Սեպտեմբերի 30վնանեան երէկ իր կեդրոնատեղիին մէջ ընդունեց Լիբանանի պաշտօնակազմի ֆեդերատիոնի նախագահ Ժան Համարը:

Նախարար Յովնանեանի հետ իր ունեցած հանդիպումէն ետք, Համարը յայտնեց, թէ նախարար տեղեակ պահած է Լիբանանի պաշտօնակազմի ֆեդերատիոնի անդամներուն մասին, որոնք 2002-2003 եղանակը սկսան յաւաքի եւ այժմ ամէն ճիգ ի գործ կը դնեն, միջազգային մակարդակին հասնելու համար:

Համարը յայտնեց նաեւ, թէ նախարար տեղեակ պահած է այսօր տեղի ունենալիք ֆեդերատիոնի ընդհանուր ժողովին մասին, որուն համար միակ թեկնածու ներկայացած է Անիպալի ներկայացուցիչը՝ Յուստ Նամէ:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ՎԱՂԸ՝

Հ. Մ. Ը. Մ. - ՇԱՊԱՊ ՌԻԱՏԻ

Լիբանանի ֆուտբոլի Բ. դասակարգի ախոյեանութեան 5րդ հանգրուանին, վաղը՝ Կիրակի, Հ. Մ. Ը. Մ.ի ֆուտբոլի ներկայացուցչական խումբը Ժունիէի Քաղաքապետարանի դաշտին վրայ կը ձևակազմէ Շապապ Թրիփոլիի դէմ: Մրցումը տեղի կ'ունենայ ժամը 2:00ին:

Մրցումը նուազ կատարած Հ. Մ. Ը. Մ., որ արձանագրած է երեք յաղթանակ, ապահովելով առաւելագոյն ինը կէտերը, այժմ կը գրաւէ ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը, իր ունեցած կողմնորոշման շնորհիւ գերազանցելով Հ. Մ. Մ.ը (2րդ) եւ Իծթիմահին (3րդ), որոնք սակայն կատարած են չորսական մրցում:

Հակառակ անոր որ Ժունիէի Քաղաքապետարանի դաշտին վրայ տեղի ունենալիք մրցումին (սկզբունքով անիկա պետք է, որ տեղի ունենար Պորձ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ, որովհետեւ հիւրընկալ խումբը Հ. Մ. Ը. Մ.ն է), Հ. Մ. Մ.ի տղաքը ոչ մէկ ճիգ պիտի խնայէն հիւսիսի խումբին դէմ արձանագրելով եղանակի իրենց չորրորդ յաղթանակը պարագլուխի դիրքը այլ խումբի մը չփոխելու համար:

Մրցակից խումբը ցարդ արձանագրած է մէկ յաղթանակ, երկու հաւասարութիւն եւ կրած՝ մէկ պարտութիւն (Հ. Մ. Մ.էն):

Հ. Մ. Ը. Մ.ի համակիրներէն կը սպասուի խունեան ուղղուի Ժունիէի Քաղաքապետարանի դաշտ, քաջալերելու համար տղաքը, որոնք իրենց համակիրներուն ներկայութեան վստահաբար, որ աւելի մեծ կորովով պիտի պայքարին իրենց մրցակիցին դէմ:

Ստորեւ՝ շաբաթավերջի (Ա. եւ Բ. դասակարգ) մրցումներուն յայտագիրը:

Ա. ԴԱՍԱԿԱՐԳ (6ՐԴ ՎԱՆԳՐՈՒԱՆ)

ՀԱՐԱՄԹ. 30 ՆՈՅԵՄԲԵՐ	ԺԱՄ ԴԱՇՏ
Շապապ Սահէլ - Ախա Ալէյ	2:00իցՄ. Աւան
Օլիմփիք - Թատամոն Սուր	8:30իցՊէյրուք

ԿԻՐԱԿԻ. 1 ԴԵՎՏԵՄԲԵՐ

Նըմէ - Պըրժ	1:00իցՄ. Աւան
Սաթէ - Մապարրա	2:00իցՊ. Համուտ
Սաֆա - Ահտ	2:00իցՍաֆա
Անսար - Սալամ	2:00իցՊէյրուք

Բ. ԴԱՍԱԿԱՐԳ (5ՐԴ ՎԱՆԳՐՈՒԱՆ)

ՀԱՐԱՄԹ. 30 ՆՈՅԵՄԲԵՐ	ԺԱՄ ԴԱՇՏ
Մահապպա - Մաթտալ Այնճար	2:00իցԹրիփոլի
Հ. Մ. Մ. - Իսլամ Ծիմալի	2:00իցՊ. Համուտ

ԿԻՐԱԿԻ. 1 ԴԵՎՏԵՄԲԵՐ

Հ. Մ. Ը. Մ. - Շապապ Թրիփոլի	2:00իցԺունիէ
Շապապ Խիամ - Թատ. Նապաթիէ	2:00ից Ահտ
Ռիատա Ուալ Ատապ - Իծթիմահին	2:00ից Թրիփոլի
Ահլի Սալտա - Ռասիմկ	2:00իցԻսլամ

ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՍՕՐ՝ ՄՈՆԱԶՔՈ - ՓԱՐԻՉ ՍԵՆ ԺԵՐՄԵՆ

Ֆրանսայի ֆուտբոլի ախոյեանութեան 17րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Նիս, որ հիւրը պիտի ըլլայ Սըտանի (16րդ), յաղթանակէ այլընտրանք չունի, այլապէս անիկա կրնայ կորսնցնել Ա. դիրքը՝ նկատի ունենալով, որ 2րդ եւ 3րդ դիրքերուն վրայ գտնուող Լիոն եւ Մարսէյ միայն երկուքական կէտով են կր մնան:

Յարդ միայն երկու պարտութիւն կրած Նիս, որ Ա. դասակարգի խումբերուն մէջ ունի ամէնէն յաւաքտանգակներ (անիկա ստացած է միայն եօթը կող), դաշտ պիտի ներկայանայ առանց իր խմբապետին՝ Սոսէ Բոպոսի (վիրաւոր):

Շաբթուան կարեւորագոյն մրցումներէն մէկը պիտի ըլլայ Մոնաքո - Փարիզ Սէն Ժերմէն հանդիպումը: Մայրաքաղաքի կազմը, որ իր վերջին չորս

մրցումներէն կրցած է միայն մէկ կէտ ապահովել, իր կարելիին պիտի ընէ՝ երեք կէտով վերադառնալու մայրաքաղաք: Իշխանապետական կազմը, իր կարգին, յաղթանակի պետք ունի, որովհետեւ վերջին ութ մրցումներուն, արձանագրած է միայն երկու յաղթանակ եւ կրած՝ երկու պարտութիւն:

Մարսէյ կարեւոր մրցումը ունի կատարելիք, երբ այցելէ Պասթիայի դաշտը: Բորսիք քաջիկերը, որոնք ցարդ կրած են ութ պարտութիւն, պի-

տի փորձեն խանգարել Մարսէյի հաշիւները, որ ամէն գնով կը ձգտի գրաւել առաջին դիրքը:

17րդ հանգրուանի կարեւոր հանդիպումներէն մէկն է նաեւ Օքսէր - Պորտո ճակատումը, որ պիտի ըլլայ շաբաթավերջի վերջին մրցումը: Երկու խումբերն այլ այժմ կը գտնուին ոչ նախանձելի դիրքի վրայ: Օքսէր կը գրաւէ 9րդ դիրքը, մինչ Պորտո՝ 11րդ դիրքը:

Ստորեւ՝ 17րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրուքի ժամով):

ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Մոնաքո - Փարիզ Ս. Ժ.	18:15ից
Աժաքսիօ - Լը Հաւրը	21:00ից
Պասթիա - Մարսէյ	21:00ից
Նանց - Մոնփելիէ	21:00ից
Ռէնց - Լիլ	21:00ից
Սըտան - Նիս	21:00ից
Սոչօ - Թրուա	21:00ից

ՎԱՂԸ

Լիոն - Սըրապպուրկ	19:00ից
Լանս - Կենկան	19:00ից
Օքսէր - Պորտո	21:45ից

ԱՆՎԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱՂԸ՝ ԼԻՎԵՐՓՈՒԼ - ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՆՏՆԱՅԹԵՏ ԳԱԳԱԹԻ ԵԱԿԱՏՈՒՄ

Անգլիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 16րդ հանգրուանի եւ եղանակի կարեւորագոյն մրցումներէն մէկը տեղի պիտի ունենայ վաղը՝ Կիրակի, երբ «Լիվերփուլ» մէջ Լիվերփուլ պիտի հիւրընկալէ Մանչեսթըր Եունայթըտը: Լիվերփուլ, որ իր կատարած վերջին երեք մրցումներուն (ախոյեանութիւն) արձանագրած է միայն մէկ յաղթանակ եւ կրած երկու պարտութիւն, այժմ կը գրաւէ 2րդ դիրքը, մէկ կէտով են մնալով Արսենալէն եւ հինգ կէտով գերազանցելով Մանչեսթըրը (5րդ):

Իր դաշտին վրայ պարտութիւն մը կրելու պարագային, Լիվերփուլ կրնայ աւելիով են մնալ Արսենալէն, որ այսօր իր դաշտին «Հայրերի» մէջ պիտի հիւրընկալէ Ասթոն Վիլան (11րդ):

Լիվերփուլին պարտութիւնէն պատրաստ է օգտուելու 3րդ դիրքը գրաւող Էվըրթըն, որ ունի 29 կէտ: Անիկա վաղը Նիւքեմբըրի հիւրը պիտի ըլլայ:

Մանչեսթըր քաղաքի երկրորդ խումբը՝ Սիթի, որ Լիվերփուլ քաղաքի երկրորդ խումբին հակապատկերն է եւ կը գրաւէ ընդհանուր դասաւորման 16րդ դիրքը, պիտի հիւրընկալէ Պոլընը (18րդ): Սիթիի մարկի Բեռնի Բիլլըն պիտի փորձէ անպայման երեք կէտ խլել իր հիւրէն. աւելի լաւ դիրքերու վրայ գտնուելու համար:

Ստորեւ՝ 16րդ հանգրուանի մրցում-

ներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրուքի ժամով):

ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Արսենալ - Ասթոն Վիլա	17:00ից
Պիւլմիկիէմ - Թոթեմհամ	17:00ից
Պլեյքոլըն - Ֆուլիէմ	17:00ից
Չելսի - Սանտըրբիտ	17:00ից
Մանչեսթըր Սիթի - Պոլըն	17:00ից
Ուեսթ Պրոմուիչ - Միտլըպոլո	17:00ից

Լիվերփուլ - Մանչ. Եունայթըտ	14:15ից
Նիւքեմբըր - Էվըրթըն	16:15ից
Լիօ - Չարլթըն	17:00ից

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ
Ուեսթ Համ - Սաութհեմթըն 22:00ից

ԱՅՇԻԼ ԻՐԱՐՕԳՆՈՒԹԵԱՆ

ՄՆՏՈՒԿԸ,

ԿԱՆԽԱՐԳԻԼԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԿՈՒՐԾՔԻ ՔԱՂՅԿԵՂԸ,

ST. MARC ԱԽՏԱԾԱՆԱԶՄԱՆ

ԿԵԴՐՈՆԻՆ ՆԵՏ ԳՈՐԾԱԿՅԱԲԱՐ

ՆՈՅԵՄԲԵՐ ԱՍՏՈՒԱՆ ԸՆԹՃՔԻՆ

Կ'ԸՆԾԱՅԷ ՅԱՏՈՒԿ ԱՌԻԹ՝

MAMMOGRAPHIE + ECHO

50000 L.A. ՓՈԽԱՆ 150000 L.A.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԵՂԻ

ԿՈՒՐՇԵԱՆ ԱՅՇԻԼԻ ԳՐԱՍԵՆՃԱԿԻՆ

ՍԵՂ, ԱՍԵՆ ՕՐ ԱՌԱՌՕՏԵԱՆ ԺԱՄԸ

8:30ԵՆ 4:30:

ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ ԹԻՌՎ ԿՏՐՈՆԵՐ

Լեմ Թեդադե: بعد الان

ԱՅՍ ԱՌԻԹՈՎ ԻՐԱՐԱՆԱԳՐՈՒՄԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԸ ԶՐԻՕՐԸՆ ՊԻՏԻ ՕԺՏՈՒԻ

MEDNET INFO-SANTE ԲԺՇԿԱԿԱՆ

ԵՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱՎԱՆ 2ԵՆՈՒՅԵԱՅԻՆ

ՍՊԱՍԱՐԿՈՒԹԵԱՆ ՄԵԿ ՏԱՐՈՒՄՆ ԲԱՐՏՈՎ:

ԱՅՇԻԼ ԱՅՇԻՏԻ ԸՆԵՔ. Բ. ՅԱՐԿ

ՀԵՌ. 242556/7

HEALTH CALL CENTER

ՀԵՐ ԵՆ

ԱՅՇԻԼ ԱՅՇԻՏԻ ԸՆԵՔ. Բ. ՅԱՐԿ

ՀԵՌ. 242556/7

ԱՅՇԻԼ ԱՅՇԻՏԻ ԸՆԵՔ. Բ. ՅԱՐԿ

ՀԵՌ. 242556/7

ԱՅՇԻԼ ԱՅՇԻՏԻ ԸՆԵՔ. Բ. ՅԱՐԿ

ՀԵՌ. 242556/7

ԱՅՇԻԼ ԱՅՇԻՏԻ ԸՆԵՔ. Բ. ՅԱՐԿ

ՀԵՌ. 242556/7

ԱՅՇԻԼ ԱՅՇԻՏԻ ԸՆԵՔ. Բ. ՅԱՐԿ

ՀԵՌ. 242556/7

ՔԱԼՉԻՕ

Ա. ԷՍ. ՌՈՍԱ - ԵՈՒՎԵՆԹՈՒՄ

ՄՐՑՈՒՄԸ՝

12ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆԻ

ԳԱԳԱԹԻ ԵԱԿԱՏՈՒՄԸ

Իտալիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Քալչիօ) 12րդ հանգրուանի բացման մրցումին, այսօր տեղի կ'ունենայ Ռեճինա - Քիեո վերնա ճակատումը, մինչ մնացեալ բոլոր հանդիպումները տեղի կ'ունենան վաղը՝ Կիրակի:

Շաբաթավերջին տեղի ունենալիք մրցումներուն, ամէնէն կարեւոր եւ հետաքրքրական ճակատումներէն մէկը պիտի ըլլայ Ա. Էս. Ռոսա - Եուվենթուս մրցումը, թէեւ Հոմի կազմը ներկայիս այդքան ալ փայլուն օրերու մէջ չի գտնուիր: Անիկա կը գրաւէ ընդհանուր դասաւորման 9րդ դիրքը: Պարտութեան մը պարագային, անիկա շատ աւելիով պիտի նահանջէ: Եուվէ, որ ցարդ անպարտելի միակ խումբն է, միայն կողմ վերջին յարբերութեամբ է, որ ետ կը մնայ պարագլուխի դիրքը գրաւող Ա. Սէ. Միլանէն, որ հիւրը պիտի ըլլայ Էմփոլիի (10րդ): Այս եղանակին իր դաշտին վրայ ցարդ միայն մէկ յաղթանակ արձանագրած Էմփոլի, դժուար թէ յաջողի որեւէ անակնկալ մը ստեղծել: Եթէ պատահի, որ անիկա անակնկալ մը ստեղծէ, այդ մէկը պիտի ըլլայ ի շահ Եուվենթուսի, անշուշտ եթէ այս վերջինը յաջողի պարտութեան մատնել Ա. Էս. Ռոսան:

Պրեշիա (14րդ), որ հիւրը պիտի ըլլայ Ինթեր Միլանի (4րդ), ախոյեանութեան մրցումներուն երբեք չէ յաջողած յաղթական վերադառնալ անոր դաշտէն՝ «Սան Միրօ»էն:

3րդ դիրքին վրայ գտնուող Լացիօ Ռոսա, որ մէկ կէտով կը գերազանցէ Ինթերը, իսկ մէկ կէտով են կը մնայ Ա. Սէ. Միլանէն եւ Եուվենթուսէն, հիւրը պիտի ըլլայ Փիաչենցայի (13րդ): Հոմի կազմը այս եղանակին օտար դաշտի վրայ իր կատարած մրցումներուն ոչ մէկ պարտութիւն կրած է:

12րդ հանգրուանին տեղի ունենալիք Քոնո-Ուտի-նեպէ մրցումը երէկ յետաձգուեցաւ ողորդումներու պատճառով:

Ստորեւ՝ 12րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէյրուքի ժամով):

ԱՅՍՕՐ	ԺԱՄ
Ռեճինա - Քիեո վերնա	21:30ից
ՎԱՂԸ	
Արալանթա - Փերուճիա	16:00ից
Պոլոնիա - Մոտենա	16:00ից
Էմփոլի - Ա. Սէ. Միլան	16:00ից
Ինթեր Միլան - Պրեշիա	16:00ից
Փիաչենցա - Լացիօ Ռոսա	16:00ից
Թորինօ - Փարմա	16:00ից
Ա. Էս. Ռոսա - Եուվենթուս	21:30ից

ՃԱՏՐԱԿ

1

ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՌԱՂՍ ԵՆ ՄԱԹ 2 ԵԱՐԺՈՒՄՈՎ

2

ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՌԱՂՍ ԵՆ ՄԱԹ 2 ԵԱՐԺՈՒՄՈՎ

3

ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՌԱՂՍ ԵՆ ՄԱԹ 2 ԵԱՐԺՈՒՄՈՎ

4

ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՌԱՂՍ ԵՆ ՄԱԹ 2 ԵԱՐԺՈՒՄՈՎ

5

ՊՕՍԵՕ ՄԻԼՈՍԵԻ (2002)

6

ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՌԱՂՍ ԵՆ ՄԱԹ 2 ԵԱՐԺՈՒՄՈՎ

7

ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՌԱՂՍ ԵՆ ՄԱԹ 2 ԵԱՐԺՈՒՄՈՎ

8

ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՌԱՂՍ ԵՆ ՄԱԹ 2 ԵԱՐԺՈՒՄՈՎ

9

ՃԵՐ

